

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶԵԿՈՒՅՑ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ
ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1. Ժողովրդագրական վիճակի միտումներն ու մոր և մանկան առողջության հիմնական ցուցանիշները	9
1.1 Ժողովրդագրական վիճակի միտումներ.....	9
1.2 Մոր և մանկան առողջություն.....	12
Գլուխ 2. Տնային տնտեսությունների կողմից կատարված ծախսերը մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման նպատակով	18
2.1 Մեթոդաբանություն	18
2.1.1 Ըստ կենսամակարդակի և բնակության վայրի բնակչության ծախսերի գնահատման մոտեցումներ.....	23
2.2 Ծախսերը հաշվարկված ՏՏԿԱՀ տվյալների հիման վրա ըստ բնակչության թվաքանակի և Ազգային հաշիվների համակարգի տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի ցուցանիշների.....	29
2.2.1 Առողջության առաջնային պահպանման օղակ	34
2.2.2 Ծննդատներ և Հիվանդանոցներ.....	40
Եզրակացություններ և առաջարկություններ	48
Գրականության ցանկ.....	49
Հավելվածներ	50

Աղյուսակներ

Աղյուսակ 1.1. ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները	9
Աղյուսակ 1.2. Մոր և մանկան առողջապահության ոլորտի հիմնական ցուցանիշները, 2011-2014թթ.....	12
Աղյուսակ 1.3. Ծննդոգնության հիմնարկներում կենդանի ծնվածներն ըստ ծնվելիս մարմնի զանգվածի, 2009-2014թթ., մարդ.....	13
Աղյուսակ 1.4. Երեխաների հիվանդացությունը կյանքի առաջին տարում, 2009-2014թթ., միավոր.....	14
Աղյուսակ 1.5. Վիրաբուժական միջամտություններ ծննդոգնության հիմնարկներում, 2011-2014թթ., միավոր	15
Աղյուսակ 1.6. Հղիության արհեստական ընդհատումների քանակն ըստ տեսակի (առանց մինի վիժումների), 2011-2014թթ., միավոր	16
Աղյուսակ 1.7. Կանանց հիվանդացությունն առաջին անգամ հաստատված ախտորոշումով ըստ առանձին հիվանդությունների, 2009-2014թթ., 100 000 կանանց հաշվով	16
Աղյուսակ 1.8. Ընդհանուր հիվանդացությունն ըստ հիվանդությունների խմբերի, 2009-2014թթ.,.....	17
Աղյուսակ 2.1 Մոր և մանկան առողջությանը վերաբերող ծախսերի հոդվածներն ըստ «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգչի»	19
Աղյուսակ 2.2 Տնային տնտեսությունների կողմից մոր և մանկան առողջության նպատակով կատարված ծախսերը մեկ շնչի հաշվով (Տես՝ Հավելված 5).....	20
Աղյուսակ 2.3 Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը, մեկ շնչի հաշվով միջին ամսական, ըստ նպատակների խմբավորված, 2012-2014թթ. (Տես՝ Հավելված 5)	21
Աղյուսակ 2.4 Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ օգնության համար առողջության առաջնային պահպանման ծառայություններին դիմած բնակչության վճարումների բաշխումը, 2014թ., (տոկոսներով)	22
Աղյուսակ 2.5 Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ բուժօգնության համար հիվանդանոց դիմած բնակչության բաշխվածությունն ըստ բուժօգնության ծառայությունների տեսակի և վճարման ձևի, մեկ հիվանդի հաշվով, 2012-2014թթ., (տոկոս).....	23
Աղյուսակ 2.6 Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին դիմած բնակչության բաշխումն ըստ բուժհիմնարկի մասնագետների և աղքատության մակարդակի, 2012-2014թթ., (տոկոսներով).....	24
Աղյուսակ 2.7 Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին դիմած բնակչության բաշխումն ըստ բուժհիմնարկի մասնագետների և բնակչության վայրի, 2014թ., (տոկոսներով).....	24
Աղյուսակ 2.8 Առողջապահության ծառայությունների դիմաց ծախսի տեսակարար կշիռը տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքում՝ հաշվարկված ըստ երկու դասակարգիչների, 2013-2014թթ.....	27
Աղյուսակ 2.9 Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերում առողջապահության վրա կատարված ծախսը և տեսակարար կշիռը կառուցվածքում, մեկ շնչի հաշվով միջին ամսական, ըստ նպատակների խմբավորված, 2013-2014թթ.	27

Աղյուսակ 2.10 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալը ըստ բուժհիմնարկի և ծառայությունների տեսակի (գնահատված ըստ բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշի) 2012-2014թթ., 1000 դրամ	29
Աղյուսակ 2.11 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալը ըստ բուժհիմնարկի և ծառայությունների տեսակի (գնահատված ըստ ԱՀՀ-ում S/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշի) 2012-2014թթ., 1000 դրամ	30
Աղյուսակ 2.12 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքը ըստ բուժհաստատության և ծառայությունների տեսակի 2012-2014թթ., տոկոս	30
Աղյուսակ 2.13 ԱԱՊ օղակում Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալը ըստ բուժհաստատության մասնագետների՝ գնահատված ըստ բնակչության միջին տարեկան թվաքանակի և ԱՀՀ-ում S/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշների 2012-2014թթ., 1000 դրամ (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.1 և 1.2).....	34
Աղյուսակ 2.14 ԱԱՊ օղակում Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքը ըստ բուժհաստատության մասնագետների 2012-2014թթ., տոկոս	35
Աղյուսակ 2.15 ԱԱՊ օղակում անձնակազմից որևէ մեկին գնացուցակով կատարված վճարումների ծավալը ըստ բուժհաստատության մասնագետների, 1000 դրամ (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.1 և 1.2)Յ6	
Աղյուսակ 2.16 ԱԱՊ օղակում անձնակազմից որևէ մեկին գնացուցակով կատարված վճարումների կառուցվածքը ըստ բուժհաստատության մասնագետների, տոկոս (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.1 և 1.2).....	37
Աղյուսակ 2.17 ԱԱՊ օղակում նվերների կամ ծառայությունների տեսքով կատարված վճարումների ծավալը ըստ բուժհաստատության մասնագետների, 1000 դրամ (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.1 և 1.2)Յ8	
Աղյուսակ 2.18 ԱԱՊ օղակում նվերների կամ ծառայությունների տեսքով կատարված վճարումների կառուցվածքը ըստ բուժհաստատության մասնագետների, տոկոս	38
Աղյուսակ 2.19 ԱԱՊ օղակում Խորհրդատվության և ռենտգեն /լաբորատոր հետազոտությունների հետ կապված վճարումների ծավալը ըստ բուժհաստատության մասնագետների, 1000 դրամ (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.1 և 1.2).....	39
Աղյուսակ 2.20 ԱԱՊ օղակում Խորհրդատվության և ռենտգեն /լաբորատոր հետազոտությունների հետ կապված վճարումների կառուցվածքը ըստ բուժհաստատության մասնագետների, տոկոս ...	39
Աղյուսակ 2.21 ԱԱՊ օղակում մոր և մանկան առողջության հետ կապված վճարումների ծավալը մեկ ծննդի և մեկ կենդանի ծննդի հաշվով ըստ բուժհաստատության մասնագետների, դրամ (Տես՝ Հավելված 2, Աղյուսակ 2.1 և 2.2).....	40
Աղյուսակ 2.22 Հիվանդանոցային բուժհաստատություններում Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալը ըստ ծառայությունների տեսակի՝ գնահատված ըստ բնակչության միջին տարեկան թվաքանակի և ԱՀՀ-ում S/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշների 2012-2014թթ., 1000 դրամ (Տես՝ Հավելված 3, Աղյուսակներ 3.1 և 3.2).....	41
Աղյուսակ 2.23 Հիվանդանոցային բուժհաստատություններում Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքը ըստ ծառայությունների տեսակների 2012-2014թթ., տոկոս	41

Աղյուսակ 2.24 Հիվանդանոցային բուժհաստատություններում հիվանդանոցի գանձապահին վճարումների ծավալը ըստ ծառայության տեսակի, 1000 դրամ (Տես՝ Հավելված 3, Աղյուսակներ 3.1 և 3.2)...	43
Աղյուսակ 2.25 Հիվանդանոցային բուժհաստատություններում հիվանդանոցի գանձապահին վճարումների ծավալի կառուցվածքը ըստ ծառայության տեսակի, տոկոս.....	44
Աղյուսակ 2.26 Հիվանդանոցային բուժհաստատություններում անմիջապես բուժանձնակազմին (բժիշկներ, բուժքույրեր և այլն) վճարումների ծավալը ըստ ծառայության տեսակի, 1000 դրամ (Տես՝ Հավելված 3, Աղյուսակներ 3.1 և 3.2).....	44
Աղյուսակ 2.27 Հիվանդանոցային բուժհաստատություններում անմիջապես բուժանձնակազմին (բժիշկներ, բուժքույրեր և այլն) վճարումների ծավալի կառուցվածքը ըստ ծառայության տեսակի, տոկոս	45
Աղյուսակ 2.28 Հիվանդանոցային բուժհաստատություններում նվերի (սննդամթերք և այլն) կամ բուժանձնակազմից որևէ մեկին մատուցված ծառայության տեսքով վճարումների ծավալը ըստ ծառայության տեսակի, 1000 դրամ (Տես՝ Հավելված 3, Աղյուսակներ 3.1 և 3.2).....	45
Աղյուսակ 2.29 Հիվանդանոցային բուժհաստատություններում նվերի (սննդամթերք և այլն) կամ բուժանձնակազմից որևէ մեկին մատուցված ծառայության տեսքով վճարումների ծավալի կառուցվածքը ըստ ծառայության տեսակի, տոկոս.....	45
Աղյուսակ 2.30 Հիվանդանոցային բուժհաստատություններում Այլ վճարումների, այդ թվում՝ լաբորատոր և ռենտգեն հետազոտությունների կամ դեղորայքի համար վճարումների ծավալը ըստ ծառայության տեսակի, 1000 դրամ (Տես՝ Հավելված 3, Աղյուսակներ 3.1 և 3.2).....	46
Աղյուսակ 2.31 Հիվանդանոցային բուժհաստատություններում Այլ վճարումների, այդ թվում՝ լաբորատոր և ռենտգեն հետազոտությունների կամ դեղորայքի համար վճարումների ծավալի կառուցվածքը ըստ ծառայության տեսակի, տոկոս.....	46
Աղյուսակ 2.32 ԱԱՊ օդակում մոր և մանկան առողջության հետ կապված վճարումների ծավալը մեկ ծննդի և մեկ կենդանի ծննդի հաշվով ըստ բուժհաստատության մասնագետների, դրամ (Տես՝ Հավելված 4, Աղյուսակ 4.5 և 4.6).....	47

Գծապատկերներ

Նկար 1.2. Մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ 2004-2014թթ. , տարի.....	11
Նկար 1.3. Մանկական մահացության գործակիցը 1985-2014թթ., (1 000 կենդանի ծնվածի հաշվով)	11
Նկար 1.4. Մեռելաճնության և շուրջճնական մահացության գործակիցները 1995-2014թթ.	12
Նկար 1.5. Նորածինների հիվանդացությունն ըստ գրանցված հիվանդությունների, 2014թթ., 1 000 հասուն և 1 000 անհաս ծնվածների հաշվով.....	13
Նկար 2.1 Առողջապահության ծառայությունների վրա ծախսերի մասնաբաժինը բնակչության ընդհանուր սպառման ագրեգատի նկատմամբ, ըստ քվինտիլային խմբերի, 2014թ., (տոկոսներով).....	28
Նկար 2.2 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքը ըստ բուժօգնության և ծառայությունների տեսակի 2012-2014թթ., տոկոս	31
Նկար 2.3 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալի դինամիկան ըստ բուժօգնության տեսակի (գնահատված ըստ բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշի) 2012-2014թթ., 1000 դրամ.....	31
Նկար 2.4 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալի դինամիկան ըստ բուժօգնության տեսակի (գնահատված ըստ ԱՀՀ-ում S/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշի) 2012-2014թթ., 1000 դրամ.....	32
Նկար 2.5 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալի դինամիկան ըստ ծառայությունների տեսակի (գնահատված ըստ բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշի) 2012-2014թթ., 1000 դրամ.....	33
Նկար 2.6 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալի դինամիկան ըստ ծառայությունների տեսակի (գնահատված ըստ ԱՀՀ-ում S/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշի) 2012-2014թթ., 1000 դրամ.....	33
Նկար 2.7 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքը, 2012-2014թթ., տոկոս	34
Նկար 2.8 Մոր և մանկան առողջության դիմաց ԱԱՊ օդակում տնային տնտեսությունների կատարած ծախսը՝ ըստ ՏՏԿԱՀ արդյունքների և հաշվարկված բնակչության միջին տարեկան թվաքանակով, 1000 դրամ (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.1).....	35
Նկար 2.9 Մոր և մանկան առողջության դիմաց ԱԱՊ օդակում տնային տնտեսությունների կատարած ծախսը՝ ըստ ՏՏԿԱՀ արդյունքների և հաշվարկված ըստ ԱՀՀ-ում S/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշի, 1000 դրամ (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.2).....	36
Նկար 2.10 Մոր և մանկան առողջության դիմաց ԱԱՊ օդակում մասնագետների ծառայությունների դիմաց տնային տնտեսությունների կատարած ընդամենը ծախսերի կառուցվածքը 2012-2014թթ., տոկոս37	
Նկար 2.11 Մոր և մանկան առողջության դիմաց հիվանդանոցային բուժօգնություններում տնային տնտեսությունների կատարած ծախսը՝ ըստ ՏՏԿԱՀ արդյունքների և հաշվարկված ըստ ԱՀՀ-ում S/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշի, 1000 դրամ (Տես՝ Հավելված 3, Աղյուսակ 3.2).....	42
Նկար 2.12 Մոր և մանկան առողջության դիմաց հիվանդանոցային բուժօգնություններում տնային տնտեսությունների կատարած ծախսերի կառուցվածքը ըստ բովանդակության, տոկոս	43

Ներածություն

Առողջ բնակչությունը ոչ միայն որոշիչ նախապայման է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար, այլև կարևոր նախադրյալ, թե՛ տնային տնտեսությունների, թե՛ հենց անհատների բարգավաճման համար:

Մոր և մանկան առողջության ծախսերը ներառում են վերարտադրողական առողջության համար, ինչպես նաև նորածինների և 0-1 տարեկան երեխաների հիվանդացության դեպքերում բնակչության կողմից կատարված վճարումները առողջության առաջնային պահպանման օղակում և ծննդատներում ու հիվանդանոցների համապատասխան բաժանմունքներում:

Ցավոք, առկա տվյալների բազաները հնարավորություն չեն տալիս գնահատել տնային տնտեսությունների ծախսերը՝ ըստ ներկայացված բոլոր վիճակների առանձին-առանձին, սակայն մոր և մանկան առողջության ծախսերի վերաբերյալ ընդհանուր գնահատականներ կարելի է ստանալ՝ օգտագործելով տնային տնտեսությունների շրջանում իրականացվող կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների տվյալները:

Զեկույցում ներկայացված են ինչպես մոր և մանկան առողջության հիմնական ցուցանիշները, այնպես էլ բնակչության կողմից կատարված ծախսերն՝ ըստ բուժհաստատությունների և մատուցված ծառայությունների տեսակների և վճարման բովանդակության:

Սույն զեկույցի շրջանակում մոր և մանկան առողջության ծախսերը գնահատվել են նաև մեկ ծննդի և մեկ կենդանի ծննդի հաշվով:

Հապավումներ

ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱԱՊ	Առողջության առաջնային պահպանում
ՀՀ	Հայաստան Հանրապետություն
Տ/տ	Տնային տնտեսություններ
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն

Գլուխ 1. Ժողովրդագրական վիճակի միտումներն ու մոր և մանկան առողջության հիմնական ցուցանիշները

1.1 Ժողովրդագրական վիճակի միտումներ

Վերջին տարիներին Հայաստանում բնակչության թվաքանակի կրճատումը որոշակիորեն պայմանավորված է նաև ծնունդների կրճատումով: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը, ընթացիկ հաշվառմամբ (2011թ. մարդահամարի հիմքով վարվող) կազմել է 2 998.6 հազ. մարդ, ինչը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազել է 0.4 %-ով, կամ 12.0 հազար մարդով: 2015թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է 41 815 ծնված, որը 2014թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 2.8%-ով, իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը, որը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանում կենդանի ծնվածների թվաքանակը 1 000 բնակչի հաշվով, նվազել է, համապատասխանաբար՝ 0.4 պրոմիլային կետով և կազմել՝ 13.9 ‰:

Աղյուսակ 1.1. ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները¹

	Բացարձակ թվաքանակ, մարդ				2015թ. բացարձակ ցուցանիշի աճը/ նվազումը, %			1 000 բնակչի հաշվով, պրոմիլ			
	2012	2013	2014	2015	2012թ. նկատմամբ	2013թ. նկատմամբ	2014թ. նկատմամբ	2012	2013	2014	2015
Ծնվածներ	42 480	41 790	43 031	41 815	98.4	100.1	97.2	14.0	13.8	14.3	13.9
տղաներ	22 743	22 152	22 869	22 204	97.6	100.2	97.1	15.7	15.3	15.9	15.5
աղջիկներ	19 737	19 638	20 162	19 611	99.4	99.9	97.3	12.5	12.5	12.8	12.5
Մեռելաձիներ	801	711	746	797	99.5	112.1	106.8	18.7 ²	16.7 ¹	17.0 ¹	18.7 ¹
0-1 տարեկան մահեր, որից՝	458	411	376	370	80.8	90.0	98.4	10.8 ³	9.8 ²	8.8 ²	8.8 ²
Տղաներ	260	243	212	204	78.5	84.0	96.2	11.7	10.9	9.3	9.2
աղջիկներ	192	168	164	166	86.5	98.8	101.2	9.7	8.6	8.0	8.5
Շուրջծնական մահացության դեպքեր	305	284	261	245	80.3	86.3	93.9	7.2	6.8	6.1	5.9
0-4 տարեկան մահեր, որից՝	515	463	445	435	84.5	94.0	97.8	12.1 ²	11.1 ²	10.3 ²	10.4 ²
տղաներ	287	277	253	243	84.7	87.7	96.0	12.6	12.5	11.1	10.9
աղջիկներ	219	186	192	192	87.7	103.2	100.0	11.1	9.5	9.5	9.8
Մայրական մահացություն	8	8	8	6	75.0	75.0	75.0	19 ⁴	22 ³	19 ³	14.3 ³

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույցներ, ՀՀ ԱՎԾ, Ե. 2016, 2015, 2014, էջ 127-135: Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2015, ՀՀ ԱՎԾ:

² 1 000 կենդանի և մեռած ծնվածի հաշվով

³ 1 000 կենդանի ծնվածի հաշվով

⁴ 100 000 կենդանի ծնվածի հաշվով

2012-2013թթ. նկատվող ծնունդների թվի կրճատման միտումը 2014 թվականին փոխարինվել է աճով, երբ արձանագրվել էր 43 777 ծնունդ, որից 464-ը կազմել էին բազմապտուղ, նրանցից՝ 447-ը՝ երկվորյակ, 17-ը՝ եռյակ: Ծնվածների ընդհանուր թվաքանակից՝ 43 031-ը կազմել էին կենդանի ծնվածները, իսկ 746-ը՝ մեռելածինները: 2013 թվականի համեմատ կենդանի ծնվածների բացարձակ թվաքանակն աճել էր 3.0%-ով, իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը, կազմել էր 14.3‰, որը նախորդող տարվա արձանագրված ցուցանիշի համեմատ աճել էր 0.5 պրոմիլային կետով: Ծնելիության գումարային գործակիցը դեռևս կազմում է 1.651 միավոր, բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ 2.150 միավորի համեմատ:

2015թ., սակայն, ծնունդների թիվը կրճատվել է՝ կազմելով 41 815: Ծնունդների կրճատմանը զուգահեռ, 2015թ. հունվար-դեկտեմբերին՝ նախորդ տարվա համեմատ, արձանագրվել է 0-1 տարեկան երեխաների մահվան դեպքերի նվազում՝ 1.6%-ով, իսկ մանկական մահացության գործակիցը, 1 000 կենդանի ծնվածի հաշվով, պահպանվել է 2014թ.-ին արձանագրված մակարդակի վրա և կազմել է 8.8‰:


Հատկանշական է, որ ի տարբերություն 2014թ. և 2015թ. արձանագրված մեռելածնության դեպքերի թվի աճի, (համապատասխանաբար՝ 104.9% և 106.8%), մնացյալ ցուցանիշների մասով առկա է բարելավման միտում, ինչը վկայում է մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում իրականացվող քաղաքականության և միջոցառումների արդյունավետության մասին: Մասնավորապես, 2015թ. դիտարկվող ժամանակաշրջանի համեմատ կենդանի ծնունդների 1.6%-ով նվազման ֆոնին, 19.2% կրճատվել է 0-1 տարեկան երեխաների մահացության դեպքերի թիվը (գործակիցը 1 000 կենդանի ծնվածի հաշվով կրճատվել է 2 տոկոսային կետով) և 19.7%-ով՝ շուրջնական մահացության դեպքերի թիվը (գործակիցը 1 000 կենդանի ծնվածի հաշվով կրճատվել է 1.3 տոկոսային կետով):

Մինչև 5 տարեկանների մահացության գործակիցը (1 000 կենդանի ծնվածի հաշվով) 2015 թվականին կազմել է՝ 10.4 պրոմիլ, 1994թ.-ի՝ 21.4 և 2004թ.-ի՝ 13.0 պրոմիլի դիմաց: Այս ցուցանիշի կրճատումը գլխավորապես պայմանավորված է 0-1 տարեկան երեխաների մահացության դեպքերի կրճատումով: 2015թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է 0-4 տարեկան երեխաների մահվան 435 դեպք, որի կառուցվածքում մինչև 1 տարեկան երեխաների մահացության դեպքերի տեսակարար կշիռը կազմել է 85.1%:

Հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և էտժննդյան ժամանակահատվածում, 2015թ. հունվար-դեկտեմբերին գրանցվել է մայրական մահացության 6 դեպք և մայրական մահացության գործակիցը՝ 100 000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 14.3 միավոր կամ 6 դեպք (ն՝ 2013, և՝ 2014 թվականներին գրանցվել է մայրամահացության 8 դեպք), 1994թ.-ին արձանագրված՝ 29.0 և 2004թ.-ին՝ 26.7 պրոմիլի դիմաց:


Այնուհանդերձ, չնայած արձանագրվող դրական միտումներին, ժողովրդագրական վիճակը բնութագրող բնակչության բնական շարժի այս ցուցանիշները դեռևս մտահոգիչ են և գտնվում են բավականին բարձր մակարդակի վրա:

Նկար 1.1. Ծնելիության գումարային գործակիցը 1980-2014թթ., երեխա




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2015

Նկար 1.2. Մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ 2004-2014թթ., տարի




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2015

Նկար 1.3. Մանկական մահացության գործակիցը 1985-2014թթ., (1 000 կենդանի ծնվածի հաշվով)



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2015

Նկար 1.4. Մեռելաճնության և շուրջճնական մահացության գործակիցները 1995-2014թթ.



*)1000 կենդանի ծնվածի և մեռելաճնի հաշվով **)1000 կենդանի ծնվածի հաշվով

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2015

1.2 Մոր և մանկան առողջություն

Գրեթե նույն պատկերն ունենք նաև մոր և մանկան առողջության վիճակը բնութագրող մյուս ցուցանիշների մասով: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են մոր և մանկան առողջապահության հիմնական ցուցանիշները, որոնց համաձայն վերջին տարիներին երկրում ավելացել են ինչպես այդպիսի բժշկական ծառայություններ մատուցող կառույցների թիվը, այնպես էլ բժիշկների և միջին բուժանձնակազմի թվաքանակը:

Աղյուսակ 1.2. Մոր և մանկան առողջապահության ոլորտի հիմնական ցուցանիշները, 2011-2014թթ.

		2011	2012	2013	2014
Կանանց կոնսուլտացիաների, մանկական պոլիկլինիկաների, ինքնուրույն բուժարանների, կանանց կոնսուլտացիաների և մանկական բաժանմունքներ ունեցող հիմնարկների քանակը, միավոր		365	375	380	378
Հղի կանանց և ծննդկանների համար նախատեսված մահճակալների քանակը, միավոր	ընդամենը	1 216	1 295	1 269	1 293
	Ֆերտիլային տարիքի 10000 կնոջ հաշվով	13.6	15.9	15.9	16.4
Հիվանդ երեխաների համար նախատեսված մահճակալների քանակը, միավոր	ընդամենը	1 194	1 189	1 184	1 523
	10000 երեխայի հաշվով	20.3	20.8	20.6	26.1

Բնակչության բնական շարժի ներկայացված ցուցանիշներից զատ, մոր և մանկան առողջության վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներ են նաև հղիության, ծննդաբերության և ետծննդյան շրջանում կանանց հիվանդացության, նորածինների հիվանդացության և ծննդոգնության ժամանակ իրականացված վիրաբուժական միջամտության վերաբերյալ տվյալները: 2009-2014թթ. կենդանի ծնվածների թվաքանակի կրճատմանը զուգահեռ շարունակաբար աճել է մինչև 2 500 գրամ քաշ


ունեցող և որպես անհաս ծնունդ բնութագրվող կենդանի ծնունդների տեսակարար կշիռը 7.5%-ից 9.2%, որոնց շրջանում պահպանվում է հիվանդացության դեպքերի բարձր մակարդակը:

Աղյուսակ 1.3. Ծննդոգնության հիմնարկներում կենդանի ծնվածներն ըստ ծնվելիս մարմնի զանգվածի, 2009-2014թթ., մարդ

	2009	2010	2011	2012	2013	2014
500 - 999 գրամ	79	97	89	86	91	89
1 000 – 1 499 գրամ	250	283	323	238	308	369
1 500 – 1 999 գրամ	653	631	640	580	590	668
2 000 – 2 499 գրամ	2 354	2 362	2 279	2 431	2 416	2 835
500-2 499 գրամ քաշ ունեցող կենդանածինների ընդհանուր թվաքանակը	3336	3373	3331	3335	3405	3961
2 500 – 2 999 գրամ	10 884	10 999	10 941	10 575	10 752	10 994
3 000 – 3 499 գրամ	18 841	18 306	17 626	17 753	16 974	17 766
3 500 – 3 999 գրամ	9 363	9 732	9 323	8 889	8 872	8 814
4 000 գրամ և ավելի	1 882	1 920	1 661	1 794	1 665	1 526
Բոլոր կենդանածինների ընդհանուր թվաքանակը	44 306	44 330	42 882	42 346	41 668	43 061

Ստորև ներկայացված գծապատկերից ակնհայտ է, որ հիվանդացության մակարդակը անհաս ծնվածների շրջանում գրանցված բոլոր հիվանդությունների մասով մի քանի անգամ գերազանցում է հասուն ծնվածների համապատասխան ցուցանիշները:


Նկար 1.5. Նորածինների հիվանդացությունն ըստ գրանցված հիվանդությունների, 2014թթ., 1 000 հասուն և 1 000 անհաս ծնվածների հաշվով



Մոր և մանկան առողջության ոլորտի կարևորագույն նվաճումներից է բժշկական ծննդոգնության՝ հիմնարկներում նորածինների և, հատկապես՝ անհաս ծնվածների մահացության դեպքերի կրճատման միտումը, մասնավորապես 2009-2014 թվականների սկզբի և վերջի դրությամբ, 100

հիվանդացածների հաշվով, հասուն ծնվածների դեպքում այն կրճատվել է 1.3-ից 0.6, իսկ անհաս ծնվածների դեպքում՝ 7.3-ից 4.6:

Նկար 1.6. Նորածինների մահացությունը (1 000 գրամ և ավելի մարմնի զանգվածով) բժշկական ծննդոգնության հիմնարկներում, 2009-2014թթ., մահացած նորածինների թվաքանակը 100 հիվանդացածների հաշվով



Տնային տնտեսությունների կողմից մոր և մանկան առողջության վրա կատարվող ծախսերի գնահատման համատեքստում ուշադրության են արժանի նաև կյանքի առաջին տարում երեխաների հիվանդացության ցուցանիշները, որոնք, ցավոք, դարձյալ ոչ այնքան բարվոք վիճակի մասին են վկայում: Հուսադրող է այն փաստը, որ 2010 թվականից սկսած այս ոլորտում ևս նկատելի են շոշափելի դրական տեղաշարժեր: Մասնավորապես, 2014 թվականին գրանցված հիվանդությունների քանակը 2010 թվականի ցուցանիշի համեմատ կրճատվել է 9%-ով, սակայն մտահոգիչ է մնում այն փաստը, որ գրեթե նույն մակարդակի վրա է մնացել կամ անգամ աճել է վարակային և մակաբուժական, արյան և արյունաստեղծ օրգանների, աչքի և հավելյալ ապարատի, միզասեռական համակարգի հիվանդությունների և բնածին արատների թիվը:

Աղյուսակ 1.4. Երեխաների հիվանդացությունը կյանքի առաջին տարում, 2009-2014թթ., միավոր

	2009	2010	2011	2012	2013	2014
Վարակային և մակաբուժական	2 142	2 948	2 838	2 802	2 516	2 717
Ներգատական (էնդոկրին) համակարգի հիվանդություններ, սնուցման և նյութափոխանակության խանգարումներ	2 120	1 912	1 750	1 543	1 469	1 368
Արյան և արյունաստեղծ օրգանների	2 459	2 646	2 577	2 603	2 722	2 775
Նյարդային համակարգի	1 572	1 937	1 358	1 284	1 070	1 185
Աչքի և նրա հավելյալ ապարատի	3 436	3 591	3 389	3 750	3 568	3 944
Ականջի և պտկաձև ելունի	3 863	3 743	3 856	3 617	3 656	3 811
Շնչառական օրգանների	33 104	32 658	30 817	30 166	29 791	29 679
Մարսողության օրգանների	5 157	5 671	5 386	5 043	4 657	4 569

Միգասեռական համակարգի	1 899	2 046	1 827	1 913	1 929	1 843
Բնածին արատներ	1 024	810	831	832	777	809
Պերինատալ շրջանում առաջացող առանձին վիճակներ	4 479	4 434	3 866	3 763	3 545	3 495
Վնասվածքներ և թունավորումներ	302	368	391	348	362	321
Այլ	2 273	2 435	2 503	2 776	2 686	2 833
Գրանցված հիվանդությունների քանակը	63 830	65 199	61 389	60 440	58 748	59 349

Տնային տնտեսությունների կողմից մոր և մանկան առողջության վրա կատարված ծախսերը պայմանավորված են նաև ծննդոգնության ժամանակ իրականացված վիրաբուժական միջամտություններով: Դիտարկվող ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի հղիությունն ավարտած կանանց թվաքանակը կազմել է ավելի քան 45 000, որոնցից գրեթե կեսին ցուցաբերվել է վիրաբուժական միջամտություն:

Աղյուսակ 1.5. Վիրաբուժական միջամտություններ ծննդոգնության հիմնարկներում, 2011-2014թթ., միավոր

	2011	2012	2013	2014
Մանկաբարձական վիրահատությունների ընդհանուր քանակը (առանց վիժումների վիրահատությունների), որից՝	19 289	18 310	18 596	19 871
արտարգանդային հղիություն	454	455	453	414
աքցանադրում	47	52	50	43
վակուում-էքստրակցիա	79	149	140	86
կեսարյան հատում (բացի փոքր հեշտոցային)	9 385	9 558	9 949	11 156
Պտղահատում	13	4	4	3

Տնային տնտեսությունների կողմից կատարվող ծախսերից ուշադրության են արժանի նաև հղիության արհեստական ընդհատումների համար կատարվող ծախսերը, որոնց գինը տատանվում է 15 000 – 25 000 դրամի սահմաններում: Յուրաքանչյուր տարի ֆերտիլային տարիքի կանանց շրջանում գրանցվում է հղիության արհեստական ընդհատման միջինը մոտ 12 հազար դեպք, որի կեսից ավելին կազմում են հղիության արհեստական թույլատրված ընդհատումները, տեսակարար կշռով հաջորդը ինքնաբեր ընդհատումներն են, որոնք հաճախ իրականացվում են դեղորայքային եղանակով և վերջին տեղում՝ բժշկական ցուցումներով արված արհեստական ընդհատումները: Կենդանի ծնվածների թվաքանակի համեմատությամբ հղիության արհեստական ընդհատումների քանակը վերջին տարիներին տատանվել է 28-31 %-ի սահմաններում, կամ, այլ խոսքով՝ յուրաքանչյուր 100 կենդանի ծննդին բաժին է ընկնում 28-30 հղիության արհեստական ընդհատում:

Աղյուսակ 1.6. Հղիության արհեստական ընդհատումների քանակն ըստ տեսակի (առանց մինի վիժումների), 2011-2014թթ., միավոր

	2009	2010	2011	2012	2013	2014
Ինքնաբեր (սպոնտան)	3 648	3 718	3 796	4 277	4 128	3 640
Արհեստական՝ թույլատրված	9 156	7 396	6 847	6 894	5 964	6 040
Արհեստական՝ բժշկական ցուցումներով	993	1 181	1 322	1 789	1 875	2 212
Ընդամենը	13 797	12 295	11 965	12 960	11 967	11 892

Կանանց հիվանդացությունների, մայրական առողջության պահպանման ու վերականգնման, ինչպես նաև ընտանիքի պլանավորման հետ կապված տնային տնտեսությունների կողմից կատարվող ծախսերի առանձին ոլորտ են ծնունակության, հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում կանանց հիվանդացության ժամանակ կատարված ծախսերը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ըստ առանձին հիվանդությունների առաջին անգամ հաստատված ախտորոշումով կանանց հիվանդացությունը բնութագրող ցուցանիշները՝ 100 000 կանանց հաշվով:

Աղյուսակ 1.7. Կանանց հիվանդացությունն առաջին անգամ հաստատված ախտորոշումով ըստ առանձին հիվանդությունների, 2009-2014թթ., 100 000 կանանց հաշվով

	2012	2013	2014
Զվարանների և հավելումների բորբոքումներ	284.1	284.1	292.5
Արգանդի վզիկի էրոզիա և էկտրոպիոն	289.3	259.8	268.7
Էնդոմետրիոզ	28.2	32.3	30.2
Դաշտանադադարի և շուրջդաշտանային շրջանի խանգարումներ	198.5	201.4	196.4
Դաշտանի խանգարումներ ¹	596.5	605.0	602.9
Կանանց ամլություն ¹	218.1	213.8	185.7
Հղիություն, ծննդաբերություն և հետծննդյան շրջան ¹	1 705.2	1 646.2	1 644.0

Վերջին տարիներին հիվանդությունների գրեթե բոլոր տեսակների մասով նկատելի է հիվանդացության նույն մակարդակի պահպանումը, իսկ երբեմն նաև՝ աճը: Միակ զգալի դրական փոփոխությունը նկատելի է կանանց ամլության մասով, որտեղ 2014 թվականին արձանագրվել է ամլության դեպքերի կրճատում ավելի քան 30 տոկոսային կետով 2012 թվականի ցուցանիշի համեմատ, ինչը վկայում է ընտանիքի պլանավորման ոլորտում զգալի ձեռքբերումների մասին: Հաջորդ դրական տեղաշարժը արձանագրվել է ֆերտիլային տարիքի կանանց հաշվով հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանի հիվանդացության մասով, որոնց բացարձակ ցուցանիշները դեռևս մտահոգության տեղիք են տալիս, մասնավորապես 40 000-ից ավելի կենդանի ծնունդների դեպքում յուրաքանչյուր տարի արձանագրվում է հիվանդացության գրեթե 20 000 և ավելի դեպք:

¹ Ֆերտիլային տարիքի կանանց հաշվով:

Աղյուսակ 1.8. Ընդհանուր հիվանդացությունն ըստ հիվանդությունների խմբերի, 2010-2014թթ.,
միավոր

	2010	2011	2012	2013	2014
Հղիության, ծննդաբերությունների և հետծննդյան ժամանակաշրջանի բարդություններ	17 714	18 039	19 101	18 986	17 220
Պերինատալ շրջանում առաջացող առանձին վիճակներ	3 279	3 115	3 219	2 771	2 770
Ընդամենը	20 993	21 154	22 320	21 757	19 990

Ուշադրության է արժանի այն փաստը, որ ըստ ներկայացված հիվանդությունների խմբերի կանանց հիվանդացության մակարդակի դինամիկան զուգորդվում է ծնելիության ցուցանիշների փոփոխությունների հետ:

Գլուխ 2. Տնային տնտեսությունների կողմից կատարված ծախսերը մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման նպատակով

2.1 Մեթոդաբանություն

Տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների դիմաց կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր են հանդիսանում տնային տնտեսությունների շրջանում իրականացվող հատուկ ընտրանքային հետազոտությունները և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից պարբերաբար իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների (SSԿԱՀ) տվյալները:

Համաձայն Հայաստանի առողջապահության հաշիվների կազմման մեթոդաբանության, տնային տնտեսությունների կողմից առողջապահության ծառայությունների դիմաց կատարված ծախսերի ամփոփ ցուցանիշների հաշվարկման համար, որպես կանոն, հիմք է հանդիսանում կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներով հաշվարկված մեկ շնչի հաշվով միջին ամսական առողջապահական ծախսը և դրա կառուցվածքն ըստ բուժօգնության տեսակի, մասնագետների և վճարման նպատակների: Այլ խոսքով՝ տնային տնտեսությունների կողմից կատարված առողջապահական ծախսերի ծավալը և կառուցվածքը բոլոր տնային տնտեսությունների հաշվով ստացվում է «տնային տնտեսությունների օրագրի» տվյալների հիման վրա՝ հաշվարկված մեկ շնչի հաշվով ծախսի և բնակչության միջին տարեկան թվաքանակի համադրության օգնությամբ: Որպես լրացուցիչ տեղեկատվություն օգտագործվում են նաև առողջապահական ծառայությունների ծավալների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները:

Ըստ առողջապահական ծառայությունների տեսակների և գործառույթների առողջապահական ընդհանուր ծախսի բաշխումը կատարվում է որոշակի պարբերականությամբ իրականացվող «Տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի» հատուկ ընտրանքային հետազոտությունների արդյունքների հիման վրա (վերջին հետազոտությունն իրականացվել է 2015 թվականին): Առանձին դեպքերում ճշգրտումներ կատարելիս օգտագործվում են նաև ըստ հիվանդությունների խմբերի բնակչության հիվանդացության մակարդակը բնութագրող ցուցանիշները:

2015թ. Հայաստանում ներդրել էր «Առողջապահական հաշիվների համակարգ 2011» ստանդարտը, որի մեթոդաբանական երաշխավորությունների համաձայն տնային տնտեսությունների կողմից առողջապահության վրա կատարվող ծախսերի հաշվարկման համար անհրաժեշտ է օգտագործել SSԿԱՀ հետազոտությամբ ստացված առողջապահական ծախսի տեսակարար կշիռը սպառողական ծախսերի զամբյուղում (հաշվարկված ըստ «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգչի») և տնային տնտեսությունների վերջնական սպառողական ծախսերի ծավալը ըստ Ազգային հաշիվների համակարգի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱՎԾ-ն տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքը ըստ «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգչի» հրապարակում է 2012թ. սկսած, Մոր և մանկան առողջության դիմաց տնային տնտեսությունների

կատարած ծախսերը ևս հաշվարկվել են 2012-2014թթ. համար: 2015թ. հաշվարկների համար օգտագործվել են «Տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի» հատուկ ընտրանքային հետազոտության տվյալները, որոնք տեղեկատվություն են պարունակում նաև ընտանիքի պլանավորման նպատակով կատարված ծախսերի վերաբերյալ: ՏՏԿԱՀ 2015թ. արդյունքները կիրառարկվեն ՀՀ ԱՎԾ կողմից 2016թ. չորրորդ եռամսյակի վերջում, ուստի և 2015թ. համար ծախսերի վերլուծությունը մյուս մեթոդներով հնարավոր չէ:

Մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման նպատակով կատարված ծախսերի վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև առկա այն սահմանափակումները, որոնք պայմանավորված են ՏՏԿԱՀ առանձնահատկություններով: Մասնավորապես, ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությամբ տեղեկատվություն է հավաքագրվում հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների կողմից վերջին 30 օրերի ընթացքում կատարված առողջապահական ծախսերի մասին, ինչն էլ ստեղծում է որոշակի դժվարություններ ընտրանքային տվյալների տարածման և հնարավոր անորոշությունների չափի հաշվարկման համար: Մյուս կողմից, այս հետազոտության նպատակը երկրում կենսամակարդակի ուսումնասիրությունն է, և առողջապահության վերաբերյալ հարցերը ներառված են փաստացի սպառողական զամբյուղի հաշվարկման և ոչ նյութական աղքատության գնահատման նպատակով, ինչով պայմանավորված՝ հետազոտության արդյունքները հաճախ տնային տնտեսությունների առողջապահական ծախսերի վերաբերյալ ամբողջական և արժանահավատ պատկերացում կազմելու համար բավարար չեն:

Մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման նպատակով կատարված ծախսերի հաշվարկման համար օգտագործվել են հետազոտված տնային տնտեսությունների օրագրի հիման վրա «Ըստ նպատակների անհատական սպառման ապրանքների և ծառայությունների անվանացանկ» դասակարգչին համապատասխան ստացված տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով ամսական ծախսերի տվյալները:

Աղյուսակ 2.1 Մոր և մանկան առողջությանը վերաբերող ծախսերի հոդվածներն ըստ «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգչի»

Ծախսի ծածկագիր ըստ COICOP 2012-2013	Ծախսի ծածկագիր ըստ COICOP 2014	Ծառայությունների անվանումը
3252	4331	Գինեկոլոգի ծառայություն (ԱԱՊ)
3253	4332	Մանկաբույժի ծառայություն (ԱԱՊ)
3322	4394	Ծննդատների և գինեկոլոգիական ծառայություններ (Հիվանդանոց)
3323	4395	Մանկաբուժական ծառայություններ (Հիվանդանոց)

Աղբյուրը՝ Ըստ նպատակների անհատական սպառման ապրանքների և ծառայությունների անվանացանկ 2014, Ըստ նպատակների անհատական սպառման ապրանքների և ծառայությունների անվանացանկ 2012-2013 - <http://armstat.am/am/?nid=452>

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տնային տնտեսության օրագրի տվյալների արդյունքներով 2012–2014թթ. տնային տնտեսությունների մեկ

շնչի հաշվով միջին ամսական ծախսերի տվյալները հասանելի են և ներկայացված ՀՀ ԱՎԾ «Գնված ոչ պարենային ապրանքներ և ստացված ծառայություններ» անվանումով տվյալների շտեմարանում: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տնային տնտեսությունների կողմից մոր և մանկան առողջության նպատակով կատարված ծախսերը:

Աղյուսակ 2.2 Տնային տնտեսությունների կողմից մոր և մանկան առողջության նպատակով կատարված ծախսերը մեկ շնչի հաշվով (Տես՝ Հավելված 5)

Ծախսի ծածկագիր		Ծառայություններ	SS ծախսը մեկ շնչի հաշվով ամսական, դրամ			տեսակարար կշիռը, %			SS ծախսը մեկ շնչի հաշվով տարեկան, դրամ		
2011-2013	2014		2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014
3252	4331	Մանկաբարձ/գինեկոլոգի ծառայություններ (ԱԱՊ)	5.8	16.4	24.1	0.04	0.09	0.12	69.6	196.8	289.3
3253	4332	Մանկաբույժի ծառայություններ (ԱԱՊ)	2.5	2.7	3.7	0.02	0.02	0.02	30.0	32.4	43.8
3322	4394	Ծննդատների և գինեկոլոգիական ծառայություններ (Հիվանդանոց)	6.1	48.9	65.0	0.04	0.27	0.32	73.2	586.8	779.7
3323	4395	Մանկաբուժական ծառայություններ (Հիվանդանոց) (Այլ)	0.6	3.9	0.0	0.00	0.02	0.00	7.2	46.8	0.0
Ընդամենը		Մոր և մանկան առողջության ծառայություններ	15.0	71.9	92.8	0.09	0.40	0.45	180.0	862.8	1112.8
Ընդամենը		Գնված ոչ պարենային ապրանքներ և ստացված ծառայություններ	16512.0	17838.7	20554.5	100	100	100	198143.5	214064.3	246654.3

Աղբյուրը՝ Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազեղված միկրոտվյալների բազա (գնված և սպառված պարենային և ոչ պարենային ապրանքներ), <http://armstat.am/am/?nid=452>

Աղյուսակում ներկայացված տվյալներում առկա է երկու լուրջ հակասություն. նախ, նկատելի է 2012թ. և հաջորդ երկու տարիների տվյալների միջև շեշտակի տարբերություն: Բնականաբար առավել հավանական է, որ 2012թ. ծախսերը իրականում չեն կարող այդքան քիչ լինել, քանզի թե՛ ծնունդների, թե՛ մոր և մանկան առողջության ու ընտանիքի պլանավորման բոլոր ցուցանիշերը ավելի բարձր են հաջորդող տարիների տվյալների համեմատ: Երկրորդ, 2014թ. որևէ ծախս չի կատարվել հիվանդանոցներում մանկաբուժական ծառայությունների մատով, չնայած երկրում արձանագրված նորածինների և 0-1 տարեկան երեխաների հիվանդացության դեպքերին: Բնականաբար այսպիսի շեղումներն ու բացակայող տեղեկատվությունը պայմանավորված են գլխավորապես ՏՏԿԱՀ ընտրանքի ձևավորման առանձնահատկություններով: Ծախսերի վերլուծության համար տեղեկատվության ամբողջականությունն ու համադրելիությունն ապահովելու և բացակայող տվյալը գնահատելու նպատակով որպես մոտեցում հիմք է ընդունվել ԱԱՊ ոլորտում մանկաբույժի ծառայությունների դիմաց մեկ շնչի հաշվով միջին ամսական ծախսի

հավելաճը 2014թ. նախորդ տարվա համեմատ և նույն համամասնությամբ ստացվել է հիվանդանոցում մանկաբուժական ծառայության նույն ցուցանիշի գնահատականը:

Աղյուսակ 2.3 *Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը, մեկ շնչի հաշվով միջին ամսական, ըստ նպատակների խմբավորված, 2012-2014թթ. (Տես Հավելված 5)*

Ծախսերի հոդվածները	Ընդամենը հանրապետություն, Ընդամենը հանրապետություն, դրամ %					
	2012	2013	2014	2012	2013	2014
Սպառողական ծախսեր	34 832	36 787	40 770	100	100	100
այդ թվում՝						
աննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ	16 620	17 010	18 034	47.71	46.24	44.23
ալկոհոլային խմիչքներ և ծխախոտ	1 441	1 524	1 648	4.14	4.14	4.04
հագուստ և կոշիկ	1 782	1 650	1 883	5.12	4.49	4.62
բնակկոմունալ ծառայություններ և վառելիք	4 426	4 646	5 683	12.71	12.63	13.94
տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանի ընթացիկ սպասարկում	1 114	1 283	1 225	3.20	3.49	3.00
առողջապահություն, որից	2 012	2 876	2 666	5.78	7.82	6.54
Մանկաբարձ/գինեկոլոգի ծառայություններ (ԱԱՊ)	5.8	16.4	24.1	0.02	0.04	0.06
Մանկաբույժի ծառայություններ (ԱԱՊ)	2.5	2.7	3.7	0.01	0.01	0.01
Ծննդատների և գինեկոլոգիական ծառայություններ (Հիվանդանոց)	6.1	48.9	65.0	0.02	0.13	0.16
Մանկաբուժական ծառայություններ (Հիվանդանոց) (Այլ)	0.6	3.9	5.3	0.002	0.01	0.01
տրանսպորտ	2 385	2 159	2 667	6.85	5.87	6.54
կապ	2 009	2 074	2 319	5.77	5.64	5.69
հանգիստ և մշակույթ	328	244	869	0.94	0.66	2.13
կրթություն	440	511	214	1.26	1.39	0.52
հյուրանոցներ, սրճարաններ և ռեստորաններ	511	807	637	1.47	2.19	1.56
այլ ծառայություններ	1 764	2 003	2 925	5.06	5.44	7.17

Աղբյուր՝ Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանագրքով միկրոտվյալների բազա (գնված և սպառված պարենային և ոչ պարենային ապրանքներ), <http://armstat.am/am/?nid=452>

Ծախսերի ամփոփ տվյալների հաշվարկման համար դարձյալ օգտագործվել են ՏՏԿԱՀ ստացված տնային տնտեսությունների առողջապահական ծախսերի կառուցվածքը բուժհաստատություններում՝ ըստ մասնագետների և ծախսերի բովանդակության:

Աղյուսակ 2.4 Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ օգնության համար առողջության առաջնային պահպանման ծառայություններին դիմած բնակչության վճարումների բաշխումը, 2014թ., (տոկոսներով)

Բուժօգնության մասնագետների ցանկ	Ընդամենը վճարվել է %	այդ թվում								
		անձնակազմից որևէ մեկին գնացուցակով, %			նվերներ կամ ծառայություններ, %			խորհրդատվության հետ կապված վճարումներ (ռենտգեն/ լաբորատոր հետազոտություն), %		
		2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014
Ընդամենը, որից	100	88	69.7	73.3	1	2	1	11	28.3	25.7
Մանկաբույժ	100	96	27.8	53.6	1	26.7	19.2	3	45.5	27.2
Մանկաբարձ/ գինեկոլոգ	100	73.2	38	72.8	0,8	1.3	0.4	26	60.7	26.8

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2012-2014

Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ, պոլիկլինիկական բուժօգնությունների մասնագետների օգնությանը դիմած բնակչությունը, միջինում իր ծախսերի 88-73.3%-ը վճարել է անձնակազմից որևէ մեկին գնացուցակով (մանկաբարձ-գինեկոլոգներին՝ 73.2-72.8%% և մանկաբույժներին՝ 96-53.6%%), 1-2%-ը (մանկաբարձ-գինեկոլոգներին՝ 0.4-1.3%% և մանկաբույժներին՝ 1-26.7%%)՝ նվերների տեսքով, իսկ 11-25.7%-ը՝ ռենտգենի կամ լաբորատոր հետազոտության համար (մանկաբարձ-գինեկոլոգներին՝ 60.7-26.8%% և մանկաբույժներին՝ 45 – 27.2%%): Ընդ որում, վճարումների չափը տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: 2014 թվականին ոչ աղքատների կողմից պոլիկլինիկական բուժօգնություններում միջինը անձնակազմից որևէ մեկին գնացուցակով կատարած վճարման միջին չափը 4.0 անգամ ավելին է, քան աղքատներինը: Ոչ աղքատների կողմից խորհրդատվության հետ կապված վճարումները (ռենտգեն/ լաբորատոր հետազոտություն) 1.7 անգամ գերազանցել են աղքատների կողմից կատարված վճարումներին:

Բնակչության կողմից բուժօգնության համար հիվանդանոց դիմելու դեպքում մեկ հիվանդի հաշվով ըստ մասնագետների և վճարման ձևի վճարումների բաշխումը ներկայացնում է գրեթե նույն պատկերը: Ծախսերի գերակշիռ մասը՝ 68-53%-ը հիվանդանոցի գանձապահին վճարումները, 19-23%-ը՝ անմիջապես բուժանձնակազմից որևէ մեկին տրված գումարը, 5-3.3%-ը՝ նվերները կամ մատուցված ծառայությունները և 20.3-14%-ը լաբորատոր հետազոտությունների և դեղորայքի դիմաց վճարումները: Հիվանդանոցի գանձապահին կատարված վճարումներից վերացարկվելու դեպքում կարող ենք փաստել, որ մանկաբարձ-գինեկոլոգի ծառայությունների դիմաց բնակչության ոչ պաշտոնական վճարումների չափը կազմում է ամբողջ վճարի մոտավորապես 24-28%-ը:

Աղյուսակ 2.5 Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ բուժօգնության համար հիվանդանոց դիմած բնակչության բաշխվածությունն ըստ բուժօգնության ծառայությունների տեսակի և վճարման ձևի, մեկ հիվանդի հաշվով, 2012-2014թթ., (տոկոս)

	Ընդամենը	այդ թվում											
		Հիվանդանոցի գանձապահին, %			Վճարումներ անմիջապես բուժ. անձնակազմին (բժիշկներ, բուժքույրեր և այլն), %			Նվեր (սննդամթերք և այլն) կամ որևէ մատուցած ծառայություն բուժանձնակազմից որևէ մեկին, %			Այլ վճարումներ, այդ թվում՝ լաբորատոր և ռենտգեն հետազոտությունների կամ դեղորայքի համար, %		
		2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014
Մանկաբարձ-գինեկոլոգ	100	65	61.9	58.8	19	14.1	23.3	5	3.7	3.3	11	20.3	14.6
Ընդամենը	100	80	84.2	81.0	9	5.7	6.4	1	0.7	0.7	10	9.4	11.9

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2012-2014թթ.

Ուշադրության է արժանի երկու հանգամանք. Նախ 2012-2014թթ. մանկաբարձ-գինեկոլոգի ծառայությունների դիմաց կատարված վճարումների կառուցվածքում կրճատվել են հիվանդանոցի գանձապահին տրված գումարի տեսակարար կշիռը (2014թ. ցուցանիշը 2012թ.-ի համեմատ կրճատվել է 6.7 տոկոսային կետով) ու նվերների և/կամ մատուցված ծառայությունների մասնաբաժինը (2014թ. ցուցանիշը 2012թ.-ի համեմատ կրճատվել է 1.3 տոկոսային կետով), և ավելացել են անմիջապես բուժանձնակազմից որևէ մեկին վճարված գումարների և հետազոտությունների ու դեղորայքի դիմաց վճարումների մասնաբաժինները:

Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ մանկաբարձ-գինեկոլոգի ծառայությունների մասով միայն հիվանդանոցի գանձապահին վճարումների մասնաբաժինն է զիջում բոլոր ծառայությունների մասով վճարումների միջին ցուցանիշը, մնացյալ բաղադրիչների մասով վճարումների տեսակարար կշիռը միջին ցուցանիշը գերազանցում է մի քանի անգամներ:

2.1.1 Ըստ կենսամակարդակի և բնակության վայրի բնակչության ծախսերի գնահատման մոտեցումներ

ՀՀ ԱԳԾ կողմից ՏՏԿԱՀ արդյունքներով հաշվարկվող տնային տնտեսությունների առողջապահական ծախսերի կառուցվածքի հիման վրա կարելի է պատկերացում կազմել նաև մոր և մանկան՝ առողջության ծառայություններից օգտվելու և ըստ այդ դրա դիմաց կատարված ծախսերի մասին՝ ըստ բնակչության կենսամակարդակի և բնակության վայրի: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի առավել մանրամասն ուսումնասիրել ՏՏԿԱՀ տվյալների բազան և հաշվարկել ըստ քվինտիլային կամ դեցիլային խմբերի տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով առողջապահական ծախսերում վերարտադրողական առողջության վրա կատարված ծախսերը և ամփոփ տվյալները ստանալ՝ ըստ այդ խմբի բնակչության թվաքանակի: Նման վերլուծությամբ հնարավոր կլինի գնահատել նախ, վերարտադրողական առողջության դիմաց վճարումների ֆինանսական բեռը տարբեր խմբերի

տնային տնտեսությունների վրա և, երկրորդ, պետության կողմից տրամադրվող օժանդակության ազդեցությունն ու արդյունավետությունը:

Աղյուսակ 2.6 Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին դիմած բնակչության բաշխումն ըստ բուժօգնության մասնագետների և աղքատության մակարդակի, 2012-2014թթ., (տոկոս)

Բուժօգնության մասնագետների ցանկ	Ոչ աղքատներ			Աղքատներ (առանց ծայրահեղ աղքատների)			Ծայրահեղ աղքատներ			Ընդամենը		
	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014
Մանկաբույժ	7.4	5.5	8.1	8.2	11.6	9.6	0	0	14.8	7.5	6.7	8.5
Մանկաբարձ/ գինեկոլոգ	2.1	2.7	4.4	4.7	4.6	3.9	0	0	0.0	2.6	3.1	4.2

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2012-2014թ.

Ուշագրավ է, որ մանկաբույժ և մանկաբարձ-գինեկոլոգ մասնագետներին ոչ աղքատ և աղքատ բնակչությունը գրեթե նույն համամասնությամբ է այցելել, իսկ ծայրահեղ աղքատները 2012-2013թթ. այդ մասնագետներին ընդհանրապես չեն դիմել, սակայն 2014թ. մանկաբույժին այցելելու տեսակարար կշիռը նրանց մոտ միանգամից կազմել է 14.8%:

Աղյուսակ 2.7 Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին դիմած բնակչության բաշխումն ըստ բուժօգնության մասնագետների և բնակչության վայրի, 2014թ., (տոկոս)

Բուժօգնության մասնագետների ցանկ	Ք.Երևան			Այլ քաղաքներ			Գյուղեր			Ընդամենը		
	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014
Ընդամենը, որից	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
Մանկաբույժ	9.0	7.7	12.5	5.8	6.4	6.3	6.9	5.8	6.0	7.5	6.7	8.5
Մանկաբարձ/ գինեկոլոգ	1.9	3.2	3.1	2.2	4.3	5.8	3.8	2.0	3.9	2.6	3.1	4.2

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2012-2014թ.

Պոլիկլինիկական բուժօգնության մասնագետների ծառայություններից օգտված բնակչության այցելությունների կառուցվածքում մանկաբարձ-գինեկոլոգին և մանկաբույժին այցելությունների տեսակարար կշիռը կազմել է Երևան քաղաքի տնային տնտեսությունների այցերի, համապատասխանաբար՝ 1.9-3.1% և 7.7-12.5%%, այլ քաղաքների տնային տնտեսությունների այցերի, համապատասխանաբար՝ 2.2-5.8% և 5.8-6.3%%, գյուղերի տնային տնտեսությունների այցերի, համապատասխանաբար՝ 2.0-3.9% և 5.8-6.0%:

Պատկերն առավել ամբողջական դարձնելու համար, հարկ է նշել, որ ըստ ՏՏԿԱՀ արդյունքների, որպես առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառ բնակչության կողմից նշվել է ինքնաբուժումը (երևանաբնականներ՝ 60% , այլ քաղաքների բնակչություն՝ 47.9% և գյուղական բնակչություն՝ 55%), ֆինանսականը (գյուղական բնակչություն՝ 17.4%, այլ քաղաքների բնակչություն՝ 24.5%, երևանաբնականներ՝ 14%): Ֆինանսական պատճառը բնակչության բոլոր վայրերում նշվել է որպես երկրորդ կարևոր պատճառ:

Մինչև 5 տարեկան երեխա ունեցող տնային տնտեսությունները պրոֆիլակտիկ գնման կամ հետծննդյան խորհրդատվության համար հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում նշված տարիքի երեխաների 35.7%-ին բերել են պոլիկլինիկա, իսկ չհաճախման պատճառները (պատասխանների նկատմամբ) բաշխվել են հետևյալ կերպ՝ ծառայություններն անհրաժեշտ չեն՝ 87%, բուժապասարկման որակը անբավարար է՝ 0.6%, շատ հեռու է՝ 1.0%, շատ թանկ է՝ 0.4%, բուժհաստատությունը փակ է՝ 0.7%: Պոլիկլինիկա հաճախած տնային տնտեսությունների 27.3%-ը պատասխանել է, որ երեխային կատարվել է իմունիզացիա, 93.6%-ը՝ չափել են երեխայի քաշը, 92.2%-ը չափել են երեխայի հասակը, 87.9%-ը՝ ստացել են խորհրդատվություն երեխայի աճի և զարգացման վերաբերյալ, 36.9%-ն էլ կատարել է արյան հետազոտություն:

2014թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքների համաձայն, տարվա ընթացքում բնակչությունը հիվանդանոցներ է դիմել բուժօգնության համար միջինում 2.1 անգամ: Գիշերը հիվանդանոցում է մնացել հիվանդանոց վերջին այցի ժամանակ դիմածների 56%-ը, որոնք հիվանդանոցում պառկել են միջինում 7.6 օր: Հիվանդանոցներում բուժում ստացած (պառկած) բնակչությունն, ըստ այնտեղ մնալու տևողության, բաշխվել է հետևյալ կերպ, մեկ շաբաթից պակաս՝ 65.8%, մեկ շաբաթից մինչև երկու շաբաթ՝ 23.4% և երկու շաբաթից ավել՝ 10.8%:⁵ Ցավոք, ՏՏԿԱՀ զեկույցը տեղեկատվություն չի ներկայացնում ըստ կենսամակարդակի և բնակչության վայրի հիվանդանոցներ դիմելու կառուցվածքի վերաբերյալ, ուստի և նման կտրվածքով ուսումնասիրություններ կատարելու համար անհրաժեշտ կլինի ունենալ ՏՏԿԱՀ տվյալների բազան:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության ժամանակ որպես վերջիններիս նյութական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշ գնահատվում են տնային տնտեսությունների ամբողջական սպառողական ծախսերը, որի ներքո հասկացվում են դրամական և ոչ դրամական սպառողական ծախսերը:

Համաձայն ՏՏԿԱՀ մեթոդաբանության, տնային տնտեսությունների ամբողջական սպառողական ծախսերը ներառում են տնային տնտեսությունների կողմից հաշվետու ժամանակահատվածում ձեռք բերված պարենային (ներառյալ տնից դուրս սպառված սննդամթերքի վրա կատարված ծախսերն ու տնային տնտեսության կողմից սպառվող (օգտագործվող) սեփական տնտեսությունից ստացված, ինչպես նաև բարեկամներից կամ այլ անձանցից անվճար ստացված սննդամթերքը՝ դրամով արտահայտված) և ոչ պարենային (ներառյալ երկարաժամկետ օգտագործման ապրանքների վրա կատարված ծախսերը) ապրանքների ու ծառայությունների դիմաց կատարված վճարումները, ինչպես նաև բարեկամներից կամ այլ անձանցից անվճար ստացված ոչ պարենային ապրանքները և ծառայությունները՝ դրամով արտահայտված:

⁵ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2015, վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Ե. 2015, էջ 144 (129-148):

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերը չեն ներառում հարկեր, դրամահավաքներ, պարտքերի մարում, ալիմենտների վճարում, բարեկամներին օգնություն, տուգանքներ, վարկերի մարում և այլ սպառման հետ չկապված ծախսեր, կուտակումներ, ինչպես նաև՝ տնային տնտեսությունների արտադրողական գործունեության հետ կապված ծախսեր (սերմերի, կենդանիների, հումքի ձեռքբերում): 2012թ.-ից տնային տնտեսությունների սպառողական ծախսերը հաշվարկելիս ՀՀ ԱՎԾ-ն անցում է կատարել «Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակները» (NACE) դասակարգչից «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգում» (COICOP) դասակարգչին:

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերն ըստ COICOP դասակարգչի ներառում են.

1. Մննդամթերք և ոչ ակտիվային խմիչքներ,
2. Ակտիվային խմիչքներ և ծխախոտ,
3. Հագուստ և կոշիկ,
4. Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ ,
5. Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանի ընթացիկ սպասարկում,
6. Առողջապահություն,
7. Տրանսպորտ,
8. Կապ,
9. Հանգիստ և մշակույթ,
10. Կրթություն,
11. Հյուրանոցներ, սրճարաններ և ռեստորաններ,
12. Տարբեր ապրանքներ և ծառայություններ:⁶

«Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգում» (COICOP) դասակարգչում նախորդ «բժշկական և առողջարանային» ծառայությունների փոխարեն ծախսերի կառուցվածքում ներառված է ողջ «առողջապահություն» ոլորտը, որի արդյունքում տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքում առողջապահության վրա կատարված ծախսի տեսակարար կշիռը երկու և ավելի անգամ գերազանցում է «ՀՀ տնտեսական գործունեության տեսակները» դասակարգչի հիման վրա հաշվարկված համապատասխան ցուցանիշը:

⁶ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2015, վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Ե. 2015, էջ 114-118):

Աղյուսակ 2.8 Առողջապահության ծառայությունների դիմաց ծախսի տեսակարար կշիռը տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքում՝ հաշվարկված ըստ երկու դասակարգիչների, 2013-2014թթ.

Ծախսերի հոդվածները	Ընդամենը հանրապետությունում			
	դրամ		%	
	2013	2014	2013	2014
Սպառողական ծախսեր, ընդամենը որից՝	36 787	40 770	100	100
Առողջապահության ծախսը ըստ «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգում» դասակարգչի	2 876	2 666	7.8	6.5
Առողջապահության ծախսը ըստ «ՀՀ տնտեսական գործունեության տեսակները» դասակարգչի	1 407	1 035	3.8	2.5

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2015

Ուշադրության է արժանի այն փաստը, որ 2013-2014թթ. ի տարբերություն տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական սպառողական ծախսերի աճի, առողջապահության վրա կատարվող ծախսերը կրճատվել են: Իսկ ըստ բնակավայրի տեսակի տնային տնտեսությունների կողմից սպառողական և առողջապահական ծախսերի համեմատությունից ակնհայտ է, որ

-նախ, 2014թ. նախորդ տարվա համեմատ առավել առաջանցիկ աճել են քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների սպառողական ծախսերը, թեև գրեթե նույն համամասնությամբ կրճատվել են առողջապահության դիմաց ծախսերը,

-երկրորդ, քաղաքային և գյուղական տնային տնտեսությունների սպառողական ծախսերի միջև տարբերությունը 2013 և 2014թթ. կազմել է, համապատասխանաբար՝ 15-31%,, ապա առողջապահական ծախսերի տարբերությունը համապատասխանաբար՝ 2.1-ից 2.3 անգամ:

Աղյուսակ 2.9 Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերում առողջապահության վրա կատարված ծախսը և տեսակարար կշիռը կառուցվածքում, մեկ շնչի հաշվով միջին ամսական, ըստ նպատակների խմբավորված, 2013-2014թթ.⁷

Ծախսերի հոդվածները	Ընդամենը հանրապետությունում		Այդ թվում՝			
			քաղաքային բնակավայր		Գյուղական բնակավայր	
	2013	2014	2013	2014	2013	2014
	ՀՀ դրամ					
Սպառողական ծախսեր, որից	36 787	40 770	38 541	44 708	33 747	33 885
Առողջապահություն	2 876	2 666	3 571	3 355	1 668	1 461
	Տոկոս					
Սպառողական ծախսեր, որից	100	100	100	100	100	100
Առողջապահություն	7.8	6.5	9.3	7.5	4.9	4.3


Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2013 և 2014թթ.,

Ըստ բնակչության կենսամակարդակի առողջապահական ծախսերի դիտարկումը երևան է հանում նրանց միջև եղած տարբերությունները: Ընդհանուր սպառման մեջ առողջապահությանն ուղղված

⁷ Համաձայն <<Ըստ նպատակների անհատական սպառման>> ազգային դասակարգչի, հարմոնիզացված Եվրոմիության <<Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգում>> (COICOP-HBS) հետ

ծախսերի բաշխումն ըստ քվինտիլային խմբերի ցույց է տալիս, որ եթե ամենաաղքատ քվինտիլում առողջապահության ծառայությունների վրա ծախսերը զիջում են այդ ծառայությունների վրա միջին ծախսի ցուցանիշին 3.7 անգամ, ապա ամենավերին քվինտիլի բնակչության առողջապահության ծառայությունների վրա կատարված ծախսերը 2.9 անգամ գերազանցում են այդ ծառայությունների վրա միջին ծախսին:⁸

Նկար 2.1 Առողջապահության ծառայությունների վրա ծախսերի մասնաբաժինը բնակչության ընդհանուր սպառման ագրեգատի նկատմամբ, ըստ քվինտիլային խմբերի, 2014թ., (տոկոս)



Աղբյուր. SSԿԱՀ 2013 և 2014թթ.

Մոր և մանկան առողջության վրա տնային տնտեսությունների կողմից կատարված ծախսերը ըստ բնակավայրի տեսակի և կենսամակարդակի գնահատելու համար հնարավոր կլինի օգտագործել ծախսերի ներկայացված բաշխվածության ծնելիության և հիվանդացության ցուցանիշները, թեև առավել իրատեսական պատկերը ստանալու համար անհրաժեշտ է հաշվարկները կատարել SSԿԱՀ տվյալների բազայի հիման վրա:

Մոր և մանկան առողջության և, ընդհանրապես, բնակչության կողմից առողջապահական ծառայությունների դիմաց կատարված ծախսերն ուսումնասիրելիս, հարկ է հաշվի առնել երեք կարևոր հանգամանք.

-Նախ, բնակչության հիվանդացության մակարդակն և առողջության վիճակը բնութագրող ցուցանիշները ժամանակային կտրվածքով ցուցաբերում են աճի, նվազման կամ որոշակի կայունության հստակ միտումներ,

-Երկրորդ, նույն միտումները հնարավոր է նկատել պաշտոնական վիճակագրության կողմից հրապարակվող առողջապահական ծառայությունների ծավալների փոփոխության մասով, ընդ որում 2014թ.-ից արձանագրվում է ծառայությունների իրական ծավալների կրճատում և գների զգալի աճ,

-Երրորդ, տնային տնտեսությունների հետազոտության դեպքում, հետազոտության նպատակների ու ընտրանքի ձևավորման մեթոդի առանձնահատկություններով պայմանավորված, յուրաքանչյուր տարի կարող են ստացվել ըստ էության տարբեր ցուցանիշներ, ինչը որոշակիորեն դժվարացնում է տնային տնտեսությունների կողմից առողջապահության և ի մասնավորի՝ մոր և մանկան առողջության վրա կատարվող ծախսերի դիտարկումը ժամանակի երկար միջակայքի ընթացքում:

⁸ Նույն տեղում, էջ 145-146:

Այս վերջին հանգամանքով պայմանավորված և հաշվի առնելով 2012թ. ցուցանիշների ու 2013-2014թթ. ցուցանիշների միջև եղած նշանակալի տարբերությունները, նպատակահարմար է քննարկել ծախսերի ծավալն ու կառուցվածքը 2013-2014թթ. համար:

2.2 Ծախսերը հաշվարկված ՏՏԿԱՀ տվյալների հիման վրա ըստ բնակչության թվաքանակի և Ազգային հաշիվների համակարգի տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի ցուցանիշների

ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների տվյալների հիման վրա և բնակչության միջին տարեկան թվաքանակով հաշվարկված մոր և մանկան առողջության վրա տնային տնտեսությունների կողմից կատարված ծախսերը 2013-2014թթ. կազմել են 4.9-5.7 միլիարդ դրամ, որից 3.1-4.3 միլիարդ դրամը կազմել են ծննդատներում և հիվանդանոցներում մատուցված ծառայությունների ծավալը, իսկ 1.9-1.4 միլիարդ դրամը՝ ԱԱՊ օղակում կատարված վճարումների ծավալը ծավալը:

Աղյուսակ 2.10 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալը ըստ բուժօգնության և ծառայությունների տեսակի (գնահատված ըստ բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշի) 2012-2014թթ., 1000 դրամ

Ծառայության անվանումը	Ընդամենը			որից՝					
				Ծննդատներ և հիվանդանոցներ			ԱԱՊ օղակ		
	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014
Ծննդատների և գինեկոլոգիական ծառայություններ	624989.1	4429875.3	5194120.8	340560.2	2864797.4	3996543	284428.9	1565077.9	1197577.8
Մանկաբուժական ծառայություններ	119245.7	553384.4	555455.6	24742.6	201180.1	309113.9	94503.1	352204.3	246341.7
Ընդամենը	744234.8	4983259.7	5749576.3	365302.8	3065977.5	4305656.8	378932.0	1917282.2	1443919.5

Ծախսերի նույն ցուցանիշները, գնահատված ըստ Հայաստանի ազգային հաշիվների տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի, ներկայացված են ստորև բերվող աղյուսակում: 2013-2014թթ. մոր և մանկան առողջության վրա տնային տնտեսությունների կողմից կատարված ծախսերը կազմել են 14-15 միլիարդ դրամ, որից 8.6-11.4 միլիարդ դրամը կազմել են ծննդատներում և հիվանդանոցներում մատուցված ծառայությունների ծավալը, իսկ 5.4-3.8 միլիարդ դրամը՝ ԱԱՊ օղակում կատարված վճարումների ծավալը:

Աղյուսակ 2.11 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալը ըստ բուժհիմնարկի և ծառայությունների տեսակի (գնահատված ըստ ԱՀՀ-ում Տ/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշի) 2012-2014թթ., 1000 դրամ


Ծառայության անվանումը	Ընդամենը			որից՝					
				Հիվանդանոցային բուժօգնություն			ԱԱՊ օդակ		
	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014
Ծննդատների և գինեկոլոգիական ծառայություններ	1749089.0	12479135.5	13758874.6	948371.9	8070248.6	10586572	800717.1	4408886.9	3172302.6
Մանկաբուժական ծառայություններ	332068.5	1558905.9	1475461.9	68901.8	566732.3	822919.3	263166.7	992173.6	652542.6
Ընդամենը	2081157.5	14038041.4	15234336.5	1017273.7	8636980.9	11409491.3	1063883.8	5401060.5	3824845.2

Դիտարկվող ժամանակահատվածում արձանագրվել է ըստ բուժօգնատվության տեսակի տնային տնտեսությունների կողմից կատարված ծախսերի կառուցվածքի զգալի փոփոխություններ: 2013-2014թթ. բնակչության կողմից մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների 61.5-74.9%-ը բաժին է ընկել ծննդատներին և հիվանդանոցներին, իսկ 38.5-25.1%-ը ԱԱՊ օդակին: Բնականաբար, վճարումների կառուցվածքում այսպիսի նշանակալի փոփոխությունը պայմանավորված է ծննդատներում և հիվանդանոցներում մանկաբարձական և գինեկոլոգիական ծառայությունների դիմաց կատարվող վճարումների աճով, ինչը նույն ժամանակաշրջանում աճել է 64.7%-ից մինչև 76.9%: Մյուս կողմից, չնայած վճարումների ծավալի համեմատաբար փոքր ծավալներին, մանկաբուժական ծառայությունների մասով ծննդատների և հիվանդանոցների տեսակարար կշիռը էլ ավելի մեծ աճ է արձանագրել՝ 2013թ. 36.4%-ից հասնելով 55.7%-ի՝ 2014թ.-ին:

Աղյուսակ 2.12 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքը ըստ բուժօգնատվության և ծառայությունների տեսակի 2012-2014թթ., տոկոս


Ծառայության տեսակը	Տարիներ	Ծննդատներ և հիվանդանոցներ	ԱԱՊ օդակ
Ընդամենը, այդ թվում	2012	49.1	50.9
	2013	61.5	38.5
	2014	74.9	25.1
Մանկաբարձական և գինեկոլոգիական ծառայություններ	2012	54.5	45.0
	2013	64.7	35.3
	2014	76.9	23.1
Մանկաբուժական ծառայություններ	2012	20.7	79.3
	2013	36.4	63.6
	2014	55.7	44.3

Նկար 2.2 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքը ըստ բուժօգնության և ծառայությունների տեսակի 2012-2014թթ., տոկոս




2013-2014թթ. տվյալները համեմատելիս նկատելի է, որ եթե ծննդատների և հիվանդանոցներում գինեկոլոգիական ու մանկաբուժական ծառայությունների (հիվանդանոցային բուժօգնություն) դիմաց վճարումների ծավալը շարունակել է աճել, ապա ԱԱՊ օդակում մանկաբարձ / գինեկոլոգի և մանկաբույժի ծառայությունների դիմաց վճարումների ծավալը 2014թ. կրճատվել է նախորդ տարվա ցուցանիշի համեմատ:

Նկար 2.3 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալի դինամիկան ըստ բուժօգնության տեսակի (գնահատված ըստ բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշի) 2012-201թթ., 1000 դրամ




Նկար 2.4 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալի դինամիկան ըստ բուժօգնարկի տեսակի (գնահատված ըստ ԱՀՀ-ում S/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշի) 2012-2014թթ., 1000 դրամ




Մոր և մանկան առողջության ընդհանուր ծախսերի ծավալները ըստ ծառայությունների տեսակների շարունակել են աճել գլխավորապես հիվանդանոցներում համապատասխան ծառայությունների դիմաց վճարումների առավել մեծ աճի շնորհիվ:

Նկար 2.5 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալի դինամիկան ըստ ծառայությունների տեսակի (գնահատված ըստ բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշի) 2012-2014թթ., 1000 դրամ




Նկար 2.6 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալի դինամիկան ըստ ծառայությունների տեսակի (գնահատված ըստ ԱՀՀ-ում Տ/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշի) 2012-2014թթ., 1000 դրամ



Մոր և մանկան առողջության ծառայությունների կառուցվածքում գերակշիռ մասը կազմել են ծննդատներում և հիվանդանոցներում մանկաբարձական և գինեկոլոգիական ծառայությունների ու

ԱԱՊ օղակում մանկաբարձ/գինեկոլոգի մատուցած ծառայությունների դիմաց վճարումները, որոնց տեսակարար կշիռը ընդամենը վճարումների կառուցվածքում 2012-2014թթ. 84%-ից աճել է մինչև 90.3%:

Նկար 2.7 Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքը, 2012-2014թթ., տոկոս



2.2.1 Առողջության առաջնային պահպանման օղակ

ԱԱՊ օղակում բնակչության կողմից վճարումներ են կատարվել մանկաբարձ գինեկոլոգի և մանկաբույժի ծառայությունների դիմաց: Ըստ բնակչության թվաքանակի գնահատման մեթոդի դեպքում 2013-2014թթ. վճարումների ծավալը կազմել է 1.9-1.4 միլիարդ դրամ, իսկ ըստ տնային տնտեսությունների վերջնական սպառման ցուցանիշի գնահատման մեթոդի՝ 5.4-3.8 միլիարդ դրամ:

Աղյուսակ 2.13 ԱԱՊ օղակում Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալը ըստ բուժօգնության մասնագետների՝ գնահատված ըստ բնակչության միջին տարեկան թվաքանակի և ԱՀՀ-ում Տ/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշների 2012-2014թթ., 1000 դրամ (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.1 և 1.2)

ԱԱՊ օղակի բուժօգնության մասնագետների ծառայություն	Ընդամենը ծախսեր					
	ըստ բնակչության թվաքանակի, 1000 դրամ			ըստ Տ/տ վերջնական սպառման ծախսերի, 1000 դրամ		
	2012	2013	2014	2012	2013	2014
Մանկաբարձ/Գինեկոլոգի ծառայություն (ԱԱՊ)	284 428.9	1 565 077.9	1 197 577.8	800 717.1	4 408 886.9	3 172 302.6
Մանկաբույժի ծառայություն (ԱԱՊ)	94 503.1	352 204.3	246 341.7	263 166.7	992 173.6	652 542.6
Ընդամենը	378 932.0	1 917 282.2	1 443 919.5	1 063 883.8	5 401 060.5	3 824 845.2


Վճարումների գերակշիռ մասը՝ 75-83%-ը կազմել են մանկաբարձ / գինեկոլոգի ծառայությունների դիմաց կատարված ծախսերը:

Աղյուսակ 2.14 ԱԱՊ օղակում Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքը ըստ բուժհաստատության մասնագետների 2012-2014թթ., տոկոս


ԱԱՊ օղակի բուժհաստատության մասնագետների ծառայություն	Ընդամենը ծախսերի կառուցվածքը, տոկոս		
	2012	2013	2014
Մանկաբարձ/Գինեկոլոգի ծառայություն (ԱԱՊ)	75.1	81.6	82.9
Մանկաբույժի ծառայություն (ԱԱՊ)	24.9	18.4	17.1
Ընդամենը	100.0	100.0	100.0

Դիտարկվող ժամանակահատվածում ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքում շարունակաբար աճել է Անձնակազմից որևէ մեկին գնացուցակով կատարված վճարումների ծավալը, իսկ նվերներով կամ մատուցված ծառայություններով վճարումներն ու խորհրդատվության և հետազոտությունների դիմաց վճարումների ծավալները 2014թ. կտրուկ նվազել են նախորդ տարվա ցուցանիշի համեմատ:

Նկար 2.8 Մոր և մանկան առողջության դիմաց ԱԱՊ օղակում տնային տնտեսությունների կատարած ծախսը՝ ըստ ՏՏԿԱՀ արդյունքների և հաշվարկված բնակչության միջին տարեկան թվաքանակով, 1000 դրամ (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.1)



Նկար 2.9 Մոր և մանկան առողջության դիմաց ԱԱՊ օդակում տնային տնտեսությունների կատարած ծախսը՝ ըստ ՏՏԿԱՀ արդյունքների և հաշվարկված ըստ ԱՀՀ-ում Տ/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշի, 1000 դրամ (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.2)




2014թ. ԱԱՊ օդակում վճարումների ծավալի կրճատման ֆոնին ավելացել է միայն անձնակազմից որևէ մեկին գնացուցակով կատարված ինչպես վճարումների ծավալը, այնպես էլ կառուցվածքում տեսակարար կշիռը՝ կազմելով ընդամենը վճարումների 69.5%-ը, ինչը, բնականաբար, ուղեկցվել է մյուս երկու բաղադրիչների տեսակարար կշիռների համարժեք կրճատումով:

Աղյուսակ 2.15 ԱԱՊ օդակում անձնակազմից որևէ մեկին գնացուցակով կատարված վճարումների ծավալը ըստ բուժհաստատության մասնագետների, 1000 դրամ (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.1 և 1.2)

ԱԱՊ օդակի բուժհաստատության մասնագետների ծառայություն	Ընդամենը վճարումներ անձնակազմից որևէ մեկին գնացուցակով, 1000 դրամ					
	ըստ բնակչության թվաքանակի,			ըստ Տ/տ վերջնական սպառման ծախսերի		
	2012	2013	2014	2012	2013	2014
Մանկաբարձ/Գինեկոլոգի ծառայություն	210 477.4	594 729.6	871 836.6	586 124.9	1 675 377	2 309 436.3
Մանկաբույժի ծառայություն	90 723.0	97 912.8	132 039.2	252 640	275 824.3	349 762.8
Ընդամենը	301 200.4	692 642.4	1 003 875.8	838 764.9	1 951 201.3	2 659 199.1

Նկար 2.10 Մոր և մանկան առողջության դիմաց ԱԱՊ օդակում մասնագետների ծառայությունների դիմաց տնային տնտեսությունների կատարած ընդամենը ծախսերի կառուցվածքը 2012-2014թթ., տոկոս



2013-2014թթ. Մոր և մանկան առողջության դիմաց ԱԱՊ օդակում մասնագետների ծառայությունների դիմաց տնային տնտեսությունների կատարած ընդամենը ծախսերի կառուցվածքում 2012-2014թթ. արձանագրվել է մանկաբարձ / գինեկոլոգների ծառայությունների դիմաց վճարումների տեսակարար կշռի շարունակական աճ՝ 69.9%-ից մինչև 86.8%, ինչը վկայում է ԱԱՊ օդակում մեծահասակների հիվանդացության հետ կապված վճարումների ավելացման մասին:

Աղյուսակ 2.16 ԱԱՊ օդակում անձնակազմից որևէ մեկին գնացուցակով կատարված վճարումների կառուցվածքը ըստ բուժօգնության մասնագետների, տոկոս (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.1 և 1.2)

ԱԱՊ օդակի բուժօգնության մասնագետների ծառայություն	Անձնակազմից որևէ մեկին գնացուցակով վճարումների կառուցվածքը, տոկոս		
	2012	2013	2014
Մանկաբարձ/Գինեկոլոգի ծառայություն	69.9	85.9	86.8
Մանկաբույժի ծառայություն	30.1	14.1	13.2
Ընդամենը	100.0	100.0	100.0

Բնակչության ծախսերի ուշագրավ կառուցվածք նկատում ենք նվերի կամ մատուցված ծառայությունների տեսքով վճարումների դեպքում: Ի հակադրություն ընդամենը ծախսերի և մյուս բաղադրիչների կառուցվածքի, այս բաղադրիչով վճարումների զգալի մասը բաժին է ընկել մանկաբույժի ծառայություններին: Չնայած 2014թ. նախորդ տարվա համեմատ վճարումների այս բաղադրիչում արձանագրվել է ծավալների կրճատում գրեթե երկու անգամ:

Աղյուսակ 2.17 ԱԱՊ օդակում նվերների կամ ծառայությունների տեսքով կատարված վճարումների ծավալը ըստ բուժհաստատության մասնագետների, 1000 դրամ (Տես՝ Հավելված 1, Աղյուսակ 1.1 և 1.2)

ԱԱՊ օդակի բուժհաստատության մասնագետների ծառայություն	Նվերների կամ ծառայությունների տեսքով վճար, 1000 դրամ					
	ըստ բնակչության թվաքանակի			ըստ S/տ վերջնական սպառման ծախսերի		
	2012	2013	2014	2012	2013	2014
Մանկաբարձ/Գինեկոլոգի ծառայություն	2275.4	20346.0	4790.3	6405.7	57315.5	12689.2
Մանկաբույժի ծառայություն	945.0	94038.6	47297.6	2631.7	264910.4	125288.2
Ընդամենը	3 220.5	114 384.6	52 087.9	9 037.4	322 225.9	137 977.4

2013-2014թթ. նվերների կամ ծառայությունների տեսքով վճարումների 82- 91%-ը տրվել է մանկաբույժներին, ինչը տրամաբանական է և բավականին տարածված պրակտիկա բնակչության շրջանում:

Աղյուսակ 2.18 ԱԱՊ օդակում նվերների կամ ծառայությունների տեսքով կատարված վճարումների կառուցվածքը ըստ բուժհաստատության մասնագետների, տոկոս

ԱԱՊ օդակի բուժհաստատության մասնագետների ծառայություն	Նվերների կամ ծառայությունների տեսքով վճարի կառուցվածքը, տոկոս		
	2012	2013	2014
Մանկաբարձ/Գինեկոլոգի ծառայություն	70.7	17.8	9.2
Մանկաբույժի ծառայություն	29.3	82.2	90.8
Ընդամենը	100.0	100.0	100.0

ԱԱՊ օդակում բնակչության կողմից կատարված ծախսերի վերջին բաղադրիչը *Խորհրդատվության և ռենտգեն /լաբորատոր հետազոտությունների* հետ կապված կատարված վճարումներն են, որոնց ծավալները 2014թ. դարձյալ նվազել են նախորդ տարվա ցուցանիշի համեմատ: Եվ քանի որ, ծառայությունների այս խումբը ևս հիմնականում առնչվում է հղիության ընթացքին և ընտանիքի պլանավորման խնդիրներին, ուստի վճարումների գերակշիռ մասը դարձյալ կազմել են մանկաբարձ / գինեկոլոգին վճարված գումարները: Ուշադրության է արժանի այն փաստը, որ 2014թ. վճարումների ծավալը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կրճատվել է գրեթե երեք անգամ, ինչը կարող է պայմանավորված լինել հիվանդանոցներում այդ ծառայությունների ծավալների աճով:

Աղյուսակ 2.19 ԱԱՊ օդակում Խորհրդատվության և ռենտգեն / լաբորատոր հետազոտությունների հետ կապված վճարումների ծավալը ըստ բուժհաստատության մասնագետների, 1000 դրամ (Տես 'Հավելված 1, Աղյուսակ 1.1 և 1.2)

ԱԱՊ օդակի բուժհաստատության մասնագետների ծառայություն	Խորհրդատվության և ռենտգեն / լաբորատոր հետազոտությունների հետ կապված վճարումներ, 1000 դրամ					
	ըստ բնակչության թվաքանակի			ըստ S/տ վերջնական սպառման ծախսերի		
	2012	2013	2014	2012	2013	2014
Մանկաբարձ/Գինեկոլոգի ծառայություն	73 951.5	950 002.3	320 950.9	208 186.4	2 676 194.3	850 177.1
Մանկաբույժի ծառայություն	2 835.1	160 253.0	67 005.0	7 895	451 439	177 491.6
Ընդամենը	76 786.6	1 110 255.2	387 955.8	216 081.4	3 127 633.3	1 027 668.7

Մանկաբույժի ծառայությունների մասով վճարումների այս բաղադրիչի տեսակարար կշռի աճը 2013 և 2014թթ. կարող է պայմանավորված լինել հղիության ընթացքի բարդությունների դեպքերի, անհաս նորածինների թվաքանակի և նորածինների հիվանդացության մակարդակի աճով:

Աղյուսակ 2.20 ԱԱՊ օդակում Խորհրդատվության և ռենտգեն / լաբորատոր հետազոտությունների հետ կապված վճարումների կառուցվածքը ըստ բուժհաստատության մասնագետների, տոկոս

ԱԱՊ օդակի բուժհաստատության մասնագետների ծառայություն	Խորհրդատվության և ռենտգեն / լաբորատոր հետազոտությունների հետ կապված վճարումների կառուցվածքը, տոկոս		
	2012	2013	2014
Մանկաբարձ/Գինեկոլոգի ծառայություն	96.3	85.6	82.7
Մանկաբույժի ծառայություն	3.7	14.4	17.3
Ընդամենը	100.0	100.0	100.0

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա տվյալները հնարավորություն չեն տալիս գնահատել մոր և մանկան առողջության հետ կապված ծախսերը ըստ առողջության կոնկրետ վիճակի կամ հիվանդության տեսակի, ուստի ընդհանուր ծախսերից բացի հաշվարկվել են նաև ծախսերը մեկ ծննդի և մեկ կենդանի ծննդի հաշվով:

Աղյուսակ 2.21 ԱԱՊ օղակում մոր և մանկան առողջության հետ կապված վճարումների ծավալը մեկ ծննդի և մեկ կենդանի ծննդի հաշվով ըստ բուժհաստատության մասնագետների, դրամ (Տես՝ Հավելված 2, Աղյուսակ 2.1 և 2.2)

ԱԱՊ օղակի բուժհաստատության մասնագետների ծառայություն	Մոր և մանկան առողջության ծախսը					
	ըստ բնակչության թվաքանակի			ըստ S/տ վերջնական սպառման ծախսերի		
	2012	2013	2014	2012	2013	2014
Ընդամենը ծնունդներ, միավոր	43288	42501	43777	43288	42501	43777
Մանկաբարձ/Գինեկոլոգի ծառայության ծախսը մեկ ծննդի հաշվով, դրամ	6 570.6	36 824.5	27 356.3	18 497.4	10 3736.1	72 465.1
Մանկաբույժի ծառայության ծախսը մեկ ծննդի հաշվով, դրամ	2 183.1	8 287	5 627.2	6 079.4	23 344.7	14 906.1
Ընդամենը ծախսը մեկ ծննդի հաշվով, դրամ	8 753.7	45 111.5	32 983.5	24 576.9	127 080.8	87 371.1
Ընդամենը կենդանի ծնունդներ, միավոր	42480	41790	43031	42480	41790	43031
Մանկաբարձ/Գինեկոլոգի ծառայության ծախսը մեկ կենդանի ծննդի հաշվով, դրամ	6 695.6	37 451	27 830.6	18 849.3	10 5501	73 721.3
Մանկաբույժի ծառայության ծախսը մեկ կենդանի ծննդի հաշվով, դրամ	2 224.6	8 428	5 724.8	6 195.1	23 741.9	15 164.5
Ընդամենը ծախսը մեկ կենդանի ծննդի հաշվով, դրամ	8 920.2	45 879	33 555.3	25 044.3	129 242.9	88 885.8

2.2.2 Ծննդատներ և Հիվանդանոցներ

Ըստ նպատակների անհատական սպառման ապրանքների և ծառայությունների անվանացանկի դասակարգմանը համաձայն, տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերում որպես մոր և մանկան առողջության մասով հիվանդանոցներում կատարված ծախս տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությամբ հավաքագրվում է տեղեկատվություն ծննդատների ու գինեկոլոգիական ծառայությունների և մանկաբուժական ծառայությունների դիմաց կատարված վճարումների վերաբերյալ (Տես՝ Աղյուսակ 2.1):

2013-2014թթ. հիվանդանոցային բուժհաստատություններում մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց բնակչության կողմից կատարված վճարումների ծավալները դրսևորել են աճի միտում, ի տարբերություն ԱԱՊ օղակի: Մինևույն ժամանակ արձանագրվել է զգալի տարբերություն երկու տարբեր մեթոդներով հաշվարկված ծախսերի ծավալների միջև: Բնակչության միջին տարեկան թվաքանակի հիման վրա կատարված հաշվարկի դեպքում հիվանդանոցային հաստատություններում ծախսը կազմել է 3-4.3 միլիարդ դրամ, իսկ Ազգային հաշիվների համակարգում տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի հիման կատարված հաշվարկի դեպքում՝ 8.6 – 11. 4 միլիարդ դրամ: 2014թ. արձանագրված աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ ընթացիկ գներով կազմել է, համապատասխանաբար՝ 140.4 և 132.1%: Մոր և մանկան առողջության ծառայությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության

բացակայությունը հնարավորություն չի տալիս գնահատել ծառայությունների իրական ծավալի ինդեքսներն ու գների աճը՝ ըստ ծառայությունների տեսակների: Խնդիրը կարևորվում է այն հանգամանքով, որ պաշտոնական վիճակագրության համաձայն 2014թ. արձագրվել է առողջության ծառայությունների իրական ծավալների կրճատում և գների առաջանցիկ աճ:

Աղյուսակ 2.22 Հիվանդանոցային բուժհաստատություններում Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների ծավալը ըստ ծառայությունների տեսակի՝ գնահատված ըստ բնակչության միջին տարեկան թվաքանակի և ԱՀՀ-ում S/տ վերջնական սպառման ծախսերի ցուցանիշների 2012-2014թթ., 1000 դրամ (Տես՝ Հավելված 3, Աղյուսակներ 3.1 և 3.2)

Հիվանդանոցային ծառայություն	Ընդամենը ծախսեր, 1000 դրամ					
	ըստ բնակչության թվաքանակի			ըստ S/տ վերջնական սպառման ծախսերի		
	2012	2013	2014	2012	2013	2014
Ծննդատների և գինեկոլոգիական ծառայություններ	340 560.2	2 864 797.4	3 996 543	948371.9	8070248.6	10586572
Մանկաբուժական ծառայություններ	24 742.6	201 180.1	309 113.9	68901.8	566 732.3	822 919.3
Ընդամենը	365 302.8	3 065 977.5	4 305 656.9	1 017 273.7	8 636 980.9	11 409 491.3

Դիտարկվող բոլոր տարիներին բնակչության կողմից կատարված վճարումների 93%-ը բաժին է ընկել ծննդատների և գինեկոլոգիական ծառայություններին, ինչն ավելի բարձր է, քան ԱԱՊ օղակում համապատասխան ծառայությունների տեսակարար կշիռը:


Աղյուսակ 2.23 Հիվանդանոցային բուժհաստատություններում Մոր և մանկան առողջության ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքը ըստ ծառայությունների տեսակների 2012-2014թթ., տոկոս

Հիվանդանոցային ծառայություն	Ընդամենը ծախսերի կառուցվածքը, տոկոս		
	2012	2013	2014
Ծննդատների և գինեկոլոգիական ծառայություններ	93.2	93.4	92.8
Մանկաբուժական ծառայություններ	6.8	6.6	7.2
Ընդամենը	100.0	100.0	100.0

2013-2014թթ. (ինչպես վերը նշվեց, ծախսերի բացարձակ ծավալները դիտարկելիս, 2012թ. տվյալները համադրելի չեն) հիվանդանոցային բուժհաստատություններում ծառայությունների դիմաց վճարումների կառուցվածքում աճել են հիվանդանոցի գանձապահին, անմիջապես բուժանձնակազմից մեկին և նվերների ու ծառայությունների տեսքով վճարումները, իսկ հետազոտությունների կամ դեղորայքի դիմաց վճարումների ծավալը մնացել է գրեթե անփոփոխ


